մանելով 40,000 ռուբլ պարտքի մէջ է գտել մեր Մայր Աթոռը, և որ այդ պարտքերը վճարելուց յետոյ մի յայտնի գումար էլ յետ է ձգել։ Երեկ Էջմիածնէը մոռացել է, որ իր պաշտօնական «Արարատ» ամսագիրը անցեալ տարուայ հոկտեմբերի տետրակով հաշիւ էր տուել և այդ հաշւի մէջ ասված էր, թէ վեհ. Կաթուղիկոսի Էջմիածին ժամանած միջոցին Աթոռի գանձարանի մէջ գտնված է եղել 3,835 ռուբլ $48^{1}/_{2}$ կ. և այնտեղ պարտքի մասին ոչնչեն խօսված չէ։ «Արարատի» հաշւի վրա հիմնելով մենք միայն կամենանք երկու խօսքով ցոյց տալ Աթոռի յիշեալ պարտքի մասին «Պահի» պաշտօնը սուտ։ բայց, թէ յիրաւի այդ հաշիւն էլ հաշիւ լինելուց չատ հեռու է, և թէ այն գումարը, որը այժմ գտնվում է Աթոռի գանձարանում, դարձեալ Աթոռի ունեցած գումարն էր, որ բանկերում չահեցվում էր,—բացի մեծ աղմուկ հանող ճարտարապետը—մի առանձին անգամ ցոյց կը տանք ասելի մանրամասնօրէն և ճշտութեամբ։ Բայց, թէ Էջմիածինն էլ կը սիրի արդեօք ճշտութիւն և ճշմարտութիւնը, այդ մեր յոդվածից յետոյ կը տեսնենք։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 1-ին դեկտեմբերի

«Մշակի» անցեալ № 211 համարի մէջ ի չարս ներքին լրոց ինձ անծանօթ քաղաքականութեամբ մեծապատիւ պ. Ամասարեանցի պատիւը չոչափող մի լուր հրատարակած էիք, որքան հասկացայ դիպ առիթ բռնելով անդ։

Կարի հետաքրքրական թուեցաւ ինձ տեսնելով նմանօրինակ ապարժէք լրոյ մը հրատարակութիւնը, ըստ որում ես տեղեկութիւն և կամք ունեցած չեմ երբէք և ոչէլ մի որ և է մէկին ներշնչած առ այդ հրատարակութիւնը. դի դժգոհ չեմ պ. Ամասարեանցէն և ոչ գանգատ յայտնած ընդդէմ նորա թէ՝ իմ նամակին և հեռագրին չը պատասխանեց և այլն, այլ ընդհակառակը եթէ պ. Ամասարեանցը մերժէր իսկ դիս իրեն սան ընդունելէ, չը նայելով, որ իմ այնչափ ուսանելու ձգտումներս և աշխատութիւնս ապարդիւն պիտի մնան, տակաւին չը պիտի ներէի, որ ուրիշներն իմ պատճառով ստուեր ձգեն մի այնպիսի անձնասրութեան պատոյն, որ իր հանրածանօթ ազգասիրական գործերովը օգտակար եղած է միշտ հայրենեաց և հետեւաբար յարգելի հայ հասարակութեան. թող թէ անոյշ չեմ գնաւ և դեռ գեղեցիկ յոյսեր ունիմ առ նա իմ գործին իրագործելուն մասին։ Եթէ կը հաճիք տեղ տուէք իմ երկտողին ձեր «Մշակի» մէջ։

Գ. Զիլինգիրեան

ԸՐՏՈՒՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ թղթակցութիւնը։

Նորերումս իշխան Բիսմարկ Ծանր յարձակմունքների ենթարկվեցաւ Բերլինի լրագրութեան կողմից այն պատճառով, որ չեկաւ Բերլին ներկայ գտնվելու պատգամաւորների ժողովի վիճաբանութիւններին առևտրական մինիստրութեան բիւդժետի մասին, իր բացակայութիւնը հիւանդութեամբ արդարացնելով, մինչդեռ ինքը գրեցնց որսի։ Իշխանի լրագիրները հերքում են այս վերջին փաստը, բայց որովհետև Բիսմարկ բազմաթիւ բարձրաստիճան անձանց որսի էր հրաւիրել, հաւանական է, որ ինքը չընդունեց այդ հիւրերին, այլ իր փեսան, որ նոյնպէս ապրում է Ֆրիդրիխսրուհէի մէջ։ Իշխանի բացակայութեան մասին շատ բան են խօսում Բերլինի մէջ, բայց ճշմարիտ է միայն այն իրողութիւնը, որ նա պարապելու համար Ֆրիդրիխսրուհէի մէջ աւելի շատ ժամանակ ունի, քան թէ Բերլինի մէջ, որտեղ անդադար խանգարում են նրա պարապմունքները։ Ամարանոցի մէջ նրա միակ զուարճութիւնը ամենօրեայ զբօսանքն է, որ նա Բերլինի մէջ չէ անում, որովհետև իշխանը չէ սիրում անդադար երեւալ հասարակութեանը։ Որովհետև Բերլինի և Ֆրիդրիխսրուհէի մէջ ընդամենը հինգ ժամվայ ճանապարհ կայ, նա հեշտութեամբ կարողանում է պահպանել իր յարաբերութիւնները Բերլինի հետ և մինիստրները անդադար նրան այցելում են, այնպէս որ իշխան Բիսմարկը աւելի իրաւունք ունի փոխարքայ համարվել, քան թէ Ֆրանսիական վարչական մինիստր Լուէրը։

Իշխանին այցելող հիւրերից ոչ մէկը այնքան աղմուկ չը հանեց, ինչպէս Ֆրանսիական դեսպան Սեն-Վալիէ, որ այցելեց իշխանին միաժամանակ Փարիզի գերմանական դեսպան իշխան Հոհենլոհէի հետ։ Պետական այդ մարդկերանց խորհրդակցութիւնները անկասկած քաղաքական բովանդակութիւն ունէին և նրանց մասին միայն ենթադրութիւններ կարելի է անել։ Մի քանի լրագիրներ լուրեր տարածեցին, իբր թէ Ֆրանսիան և Աւստրօ-Ունգարիան դաշնակցութիւն են կապել, որի համեմատ Ֆրանսիան պարտաւորվում է պաշտպանել Աւստրիայի քաղաքականութիւնը թէ արեւելեան գործերի և թէ ուրիշ նշանաւոր հարցերի վերաբերութեամբ։ Հաստատ տեղեկութիւններ հաւաքելուց յայտնվեցաւ, որ այդ լուրը կատարելապէս հնարված էր։ Իշխանի բարեկամ շրջանների մէջ հաւատացնում են, որ այդ խորհրդակցութիւնները վերաբերում էին միմիայն ֆինանսական հարցերին։

Կոմս Հացֆելդին արտաքին գործերի քարտուղար նշանակելու մասին թղթակիցը հաստատ աղբիւրներից տեղեկացել է, որ պաշտօնական շրջանների կողմից նրա դէմ գործ դրած ինտրիգները փոքր 'ի շատէ աջողվել են։ Կայսրը, որ այդպիսի դէպքերում միշտ հաւանութիւն է տալիս իշխան Բիսմարկի առաջարկութիւններին, այս անգամ էլ հաստատեց նրա առաջարկութիւնը կոմս Հացֆելդի մասին, բայց յետոյ, ինչպէս պատմում են, մի բարեկամական նամակ գրեց Բիսմարկին, որով նա մատնացոյց էր լինում այս դժուարութիւնների վրա, որոնց կոմս Հացֆելդ կարող է պատահել բարձր շրջանների մէջ։ Հասկանալի է, որ այս հանգամանքները ի նկատի ունենալով, ինքը կոմս Հացֆելդն էլ առանձին ցանկութիւն չունի վարել Իրան առաջարկած պաշտօնը և նախադասում է դեսպանի իր պաշտօնը Կ. Պոլսի մէջ, որի համար աւելի մեծ ռոճիկ է ըստանում, ինքը աւելի հանգիստ է և մանաւանդ Կ. Պոլսի մէջ նա շատ լաւ դիրք ունի։ Միւս կողմից պէտք է նկատել, որ իշխան Բիսմարկ չէ սիրում հրաժարվել այն բանից, որ նա մի անգամ առաջարկել է։ Այսպէս թէ այնպէս կոմսի վիճակը կորոշվի այն ժամանակ, երբ նա Բերլին կը հասնի։

Իշխան Բիսմարկի լրագիրներից մէկը նորերումս հրէական հարցի վերաբերութեամբ մի յօդուած հրատարակեց, որի մէջ ասց են կացրած իշխանի հայացքները այդ հարցի վրա։ Յօդուածի առաջին մասը վճռողականապէս դատապարտում է Շուէտկերի հայացքները, այնպէս որ բոլոր հրէաները չեն կարող յօդուածի այդ մասի հետ չը համաձայնվել, բայց միւս բաժնի մէջ չը համաձայնվել, բայց միւս բաժնի մէջ դուրս է բերված գերմանական աւետարանական սկզբունքը դատաւորութիւնների, դիւանական պրակտիկայի և պետական կեանքի վերաբերութեամբ։ Յօդուածի կարճառօտ բովանդակութիւնը հետեւեալն է. ,,Հրէաները իրաւաբանական և հասարակական կողմից կարող են քրիստոնեաների հետ հաւասար իրաւունքներ վայելել, բայց պէտք չէ որ նրանք մասնակցեն գերմանական ժողովրդի կառավարութեանը։" Ուրեմն յօդուածի համեմատ հրէաներին վարչական պաշտօններ չը պէտք է տալ։ Այսպիսով այդ յօդուածը աւելի շատ է պահանջում, քան թէ հակահրէական յայտնի բողոքագիրը, որի համեմատ հրէաներին չը պէտք է տալ վարչական միայն մի քանի պաշտօններ։ Այդ յօդուածը երկու կողմերին էլ հակառակում է, թէ նոէոկերին, թէ վ իրեսվին և եթէ հարցն էլ այդ ուղղութիւնը ստանայ, նա աւելի էլ կը խրճռվի։

Հրէաների դէմ ցոյցերը շարունակվում են։ Համայսարանի մէջ, երբ մի ինքված հրէայ համարձակվեցաւ պրոֆեսոր Տրէյչկէի հակառակ կարծիքներ յայտնել, ահագին աղմուկ և անկարգութիւններ սկսվեցան։ Այսպիսի պոյմաններով շրջապատված հրէական հարցը հետզհետէ անհանգստացնող բնաւորութիւն է ստանում և այժմ դժուար է նախատեսել, թէ նա ի՞նչ տեսակ վախճան կունենայ։

ՖՐԱՆՍԻԱ

—

«République Française» լրագրի յօդուածների համեմատ Ֆրանսիական քաղաքագէտները հետեւեալ տեսակէտից են նայում արեւելեան գործերի վրա։ Մենք Ֆրանսիացիներս միայն մի շահ աչքի առաջ ունենք և մեր յարաբերութիւնների ժամանակ օտար պետութիւնների հետ միայն խաղաղութեան պահպանելը պէտք է ի նկատի առնենք։ Մենք վճռել ենք ոչ թէ միայն ինքներս պատերազմ չը սկսել, այլ մեր ուղղակի շահերը պահանջում են, որ Եւրոպայի մէջ ոչ մի թնդանօթ չարձակվի։ Եւրոպայի մէջ մի որ և է պատերազմի ըսկսվելուց յետոյ կարող է եւրոպական հաւասարակշռութիւնը խանգարվել և այնպիսի անցք կարող է պատահել, որ մենք ստիպված կը լինենք դաւաճանել մեր չեզոքութեան և ինքներս պատերազմի մէջ խառնվել։ Մենք պէտք է աշխատենք, որ այսպիսի բան չը պատահի և դրա առաջն առնելու համար պէտք է մասնակցենք եւրոպական համաձայնութեանը և այնպիսի դեր խաղանք, որ խաղաղութիւն պահպանվի և որ ամենքը հասկանան, թէ մեր նըպատակն է վերջ դնել գրգռող հայցերին։ Այդ հանգամանքը կատարելապէս արդարացնում է Ֆրէյսինէին, որը Ֆրանսիայի նաւատորմը խառնեց միացեալ նաւատորմի հետ։ Եթէ մեր նաւատորմը չերեւար Դուլցինիօի մոտ, այնտեղ ոչ ոք չէր գնայ, բայց զրահակիր նաւեր կերևային Դարդանելեան նեղուցի մէջ։

Ֆրանսիական սենատի նոյեմբերի 30-ի նիստին, երբ քննվում էր արտաքին գործերի մինիստրութեան բիւդժետը, դէպք Բրոլլի յայտնեց, որ ժամանակ է վերադառնալ թիերի և Մակ-Մահօնի քաղաքականութեանը։ Անհրաժեշտ է այնպիսի քաղաքականութեան հետեւել, որ պահպանէր Ֆրանսիայի իսկական շահերը։ Ֆրանսիան պէտք է հեռու մնայ խրճռված գործերից և նրա քաղաքականութիւնը պէտք է ազատ և չեզոք լինի։ Ֆրանսիան հարց բարձրացրեց Յունաստանի օգտին ծովային ցոյց անելու մասին, բայց այդ հարցի վրա միայն Ֆրանսիական շահերի տեսակէտից պէտք է նայել։ Բայց եթէ մի անձնաւորութիւն (Գամբետտա) կայ, որ կառավարում է մեր մինիստրութիւնը, ուրեմն Ֆրանսիան Եւրոպայի հաւասարութենից կը զրկվի։ Արտաքին գործերի նախկին մինիստրը Ֆրէյսինէ ասաց, որ շատ բնական էր Ֆրանսիայի համակրութիւնը դէպի Յունաստան։ Ջերմեռանդութեան պաշտպանելու համար գործադրած միջոցները ոչ թէ թիւրքիայի դէմ էին ուղղված, այլ ալբանական ապստամբ խումբերի դէմ։ Ֆրէյսինէ մատնացոյց եղաւ, որ պետութիւնները գրեթէ միաձայն որոշեցին Յունաստանի սահմանները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 դեկտեմբերի։ „Правит. Вѣстн." լրագրի մէջ տպված է Բարձրագոյն հրովարտակ Իշխան Օլդենբուրգսկու անունով դեկտեմբերի մէկին նրա 50 ամեայ յօբելեանի լրանալու առիթով։ Գրաւոր ուսումնական շրջանի հոգաբարձու նշանակված է սենատոր բարոն Շոսկելբերգ։

ԲԵԼԳՐԱԴ, 1 դեկտեմբերի։ Բնակիչները տօնում են կառավարական վերանորոգող կուսակցութեան յաղթութիւնը ընտրութիւնների ժամանակ։ Ջինուորական երաժշտութեան խումբերը ածում են փողոցների վրա։

ԼՕՆԴՕՆ, 1 դեկտեմբերի։ Մինիստրների երեկվայ նիստի ժամանակ դեռ չէ վճռված, թէ ինչ միջոցներ պէտք է գործադրել Իրլանդիայի վերաբերութեամբ։ Կառավարութիւնը այսօր կը կայացնի վերջնական վճիռը։

ՍԿՈՒՏԱՐԻ, 2 դեկտեմբերի։ Այստեղ հասած ջերմօգորիական պատգամաւորը Մակ-Նօվիչ Լեչովիցայի և Կալիմպայի վերաբերութեամբ հարցը վճռելու համար, որոնց թիւրքերը հրաժարվում են յանձնել ջերմօգորցիներին, և համաձայնութիւն կայացնելուց յետոյ վերադարձաւ, հրաժարվելով ստորագրել յայտարարութիւնը Դուլցինիօի նահանգը գրաւելու մասին։

Կ. ՊՈԼԻՍ, 2 դեկտեմբերի։ Պարսկաստանը Բ. Դռնից վարձատրութիւն է պահանջում քիւրդերի վերջին արշաւանքի համար։

ԼՕՆԴՕՆ, 2 դեկտեմբերի։ Մինիստրների խորհուրդը երէկ հետեւեալ վճիռը կայացրեց։ Հարկաւորութիւն չը կայ Իրլանդիայի կատարող իշխանութեանը իրաւունք տալ գործող օրէնքները չափազանցնելու համար։ Մինիստրների խորհուրդը անհրաժեշտ չէ համարում հրաւիրել պարլամենտը խիստ միջոցներ գործադրելու համար։ Խորհուրդը վճիռ կայացրեց, որ եթէ իրլանդական գործերը չը լաւանան, պահանջել պարլամենտից Habeas-corpus օրէնքի դադարեցնելը և խիստ միջոցների գործադրելը կալուածական վերանորոգութիւններ մտցնելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 25 կ., երկրորդ 92 ր. 62 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 92 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր. 75 կ., երկրորդ 217 ր. 25 կ., աւելեւեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 62 կ., երկրորդ 90 ր. 62 կ., երրորդ 90 ր. 62 կ., ոսկի 8 ր.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,53 պէնս, Ամստերդամի վրա 124 պէնս, ռուսաց 100 ր. Գերմանիայի վրա արժէ 209 մարկ, Փարիզի վրա 259 ֆրանկ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ